Ղևոնդ Ալիշան

Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց

Կենդանիների պաշտամունք

Թեպետ կենդանիները ավելի վերադաս են, քան տարերքն ու բուսականությունը, նրանց պաշտամունքը ավելի ուշ է առաջացել: Եթե պետք լինի հարցնել, թե ինչ պատճառով կամ մանավանդ պատճառներով, նախ և առաջ պետք է դիմենք եգիպտացիներին, որոնք ավելի, քան մյուս ազգերը, պաշտել կամ պատվի են արժանացրել մեծ ու փոքր կենդանի արարածների: Ոմանք ասել են, թե եգիպտացիները իրենց իմացկուն շինվածքների օրինակով ցույց են տվել, որ հաստատության մի մեծ գաղափար ունեին և կենդանիների մեջ տեսնելով անփոփոխ բնություն և գործ՝ պատիվ էին մատուցում: Սակայն թվում է՝ մարդկանց համար ավելի զորավոր դրդիչ էին ոմանց գեղեցկությունը, ոմանց ուժը, թռիչքը, ձայները, երբեմն էլ՝ դրանցից ստացված վնասները և վախը, նաև պես-պես դիպվածները գրեթե բոլոր ազգերի մեջ քիչ-շատ մտցրին կենդանապաշտությունը: Նույնիկս կենդանիների խնամքը բնականաբար սեր էլ է արթնացնում, և սիրուց էլ հեռու չէ պատիվը: Շատերի համար եղել է նաև մեկ այլ մեծ պատճառ: Դա հոգեփոխության կամ, ավելի լավ է ասել, անձնափոխության մասին այլանդակ կարծիքն է, ըստ որի՝ մարդ, այր, կին, տղա, աղջիկ երբեմն փոխվել-դարձել են որևէ ոչ ասուն կենդանի՝ չորքոտանի կամ թռչուն կամ սողուն և այլն: Եվ ոչ միայն մարդիկ, այլև ամենադիցամոլ ազգերի չաստվածները երբեմն կենդանու կերպարանք են առել: Ապա որևէ պատճառով այս չաստվածներից յուրաքանչյուրին նվիրել են մի հատուկ կենդանի և հետո չաստվածի հետ կամ առնձին պաշտել են նաև այդ կենդանուն:

Թե մեր հին ազգակիցների մեջ ինչպես և որ կենդանիների պաշտամունքն է մտել, ոչ բացահայտ է և ոչ էլ անհայտ: Վերոհիշյալ պատճառներից մեկը կամ մյուսը ազդել են ինչպես նրանց, այնպես էլ այլոց վրա: Ինչպես շատերի, այնպես էլ հայերի գլխավոր պաշտելիներից կամ պատճառելիներից մեկը օձն է, որ շատ անգամ անվանվում է նաև վիշապ համարվելով ավելի մեծ, հզոր ու ահավոր: Հայտնի է, որ օձերի տված վնասը՝ խայթն ու խածը, նրանց դրածրել են ատելի, զգուշանալի, սարսափազդու: Եվ գուցե դրանց սպանողներին պատվի են արժանացրել՝ որպես օձասպանների և օձահալածների, բայց հետո վախը ահագնացել է, և սպանողների (ինչպես Հերակլեսը և Վահագնը) փոխարեն պատի են արժանացրել սպանվածների (օձերի) ցեղին:

Հույներն ունեն ոչ միայն օձին վերաբերող շատ առասպելներ և հիշատակումներ, այլև բազմատեսակ օձեր ու վիշապներ՝ ոմանք եռագլուխ, ոմանք յոթնագլուխ, ոմանք չափից դուրս մեծ և ուժեղ, մարդկանց ու գազաններին ահաբեկող և կլանող: Այդպիսիները հիշատակվում են նաև քրիստոնեության առաջին դարերում, և դրանց ոչնչացնելը կատարվում էր ոչ հին դյուցազունների ախոյանությամբ, այլ սուրբ Նշանով և սուրբ գևորգների ու թեոդորոսների անվախ համաձայնությամբ:

Մեր վերոհիշյալ հրի ու ջրի պաշտամունքների նշանավոր երկրում ևս (Անձևացյաց և Բուժունյաց) առաքյալների և ս. Գրիգորի քարոզության սկզբում հիշատակվում է. «Յայրս Քարին որջացեալ կային Վիշապք երկու, դիւացեալք և սեւացեալք. որոց՝ աղջիկ կոյս և պատանիս անմեղս զենուին. այնոցիկ արեամբ զուարաճացեալ դեւքն... Եւ ի մէջ խորաձորոյն՝ Օձք, լի թունօք մահաբերին լցեալք», որոնց սպանեցին Եվային խոստացած գլխակոխ և կակղաքայլ Հռիփսիմյան կույսերը: Սակայն պատմիչը ասում է, որ այնտեղ «օձք մարմնաւորք քարացեալ կամ մինչեւ ցայսօր»: Այդպիսի քարացած օձերի մասին մինչև հիմա էլ լսվում է այնօրինակ տեղերում, ինչպես և Գուգարքում՝ Օձունում՝ մեր Հովհան Իմաստասեր կաթողիկոսի հայրենիքում՝ եկեղեցու պատերի վրա: Սակայն դրանց հետ հին սնապաշտության հետք էլ է մնացել հասարակ մարդկանց մի մասին սրտում, որոնք, երբ իրենց տանը օձ էին տեսնում, նրան սպանելու փոխարեն աղաչում էին, որ ելնի, գնա: Օձերի հանդեպ վախի և առասպելների նշան եմ համարում մեր երկրի շատ վայրերի՝ դրանց անունը

կրելը . Բաբերդում՝ Օձտեղ, Գեղարքունիքում՝ Օձաբերդ, նրա մոտ՝ Օձ գետ, Ձորափորում՝ Օձուն, Ապահունիքում՝ Օձին, Մարանդում՝ Օձ ձոր, Կարինում՝ Օձնի, և այլն: Առավել նշանավորը Տարոնում գտնվող Օձ քաղաքն է, որ անվանվում է նաև Վիշապաքաղ, որտեղ կար նաև Վիշապաքաղ Վահագնի մեհյանը: Այս մեծագույն օձի անվամբ այլ տեղանքներ ունենք Կամախում և ավելի ծանոթ՝ Արարատի Գաբեղյանք գավառում, որտեղ քարերի մեջ թաքնվում և հայտնվում էին բազմատեսակ օձեր, վիշապներ և այլ վնասակար կենդանիներ . այդ վայրը կոչվեց Գազանածակք, իսկ հալածողները եղան ս . Սահակի աշակերտ Վարոսը և նրա ճգնավոր ընկերները:

Վիշապ սովորաբար նշանակում է «մեծամեծ օձ» և հատկապես «ջրային մեծ օձ»: Եվ գուցե անվան ապ վերջամասնիկը ջրի նշանակ է (ըստ պարսիկների), և վիշապը նման է համարվում հույների առասպելական Հիդրային, որ ապրում էր Լեռնային կոչված լճի մոտ ու մեջ, ուներ 7, 9, 50 կամ 100 գլուխ, որոնցից մեկը կտրելու դեպքում իսկույն մեկ ուրիշն էր բուսնում: Սակայն Հերակլեսը իր հետ օգնական առավ, գնաց . ինքը նետահարում էր, ընկերը կտրած գլխի տեղը անմիջապես խանձում էր:

Հին հայկազունների ազգային դրոշը կամ նշանը վիշապի պատկերով էր, և մարերի թագավորի առասպելական տեսլիքում մեր Տիգրանը հայտնվել էր վիշապին հեծած օդում արշավելիս:

Անշուշտ, սա նրա վիպասանների հանճարեղ գյուտն էր՝ որպես վիշապի այլաբանելով մարերին և նարնց բռնակալ թագավորին՝ Աժդահակին, որի անունը նշանակում է «սաստիկ խայտոթող (դահիճ) իժ»: Եվ ըստ ավանդության՝ Տիգրանը հաղթեց նրան, Աժդահակին սպանեց, իսկ ընտանիքին մեծ բազմությամբ բերեց, բնակեցրեց Հին Նախիջևանի և Գողթնյաց կողմերում՝ Երասխի եզերքում, և նրանց բնակավայրերն էլ կոչվեցին մարերի ավաններ: Նույնիսկ մար հին պարսկերենում նշանակում է «օձ»: Երգում էին նաև Տիգրանի թոռ Վահագնի՝ վիշապազունների հետ կռվելու մասին: Սակիայն չգիտենք՝ Վիշապաքաղ կոչումը սա՞ է նշանակում, թե՞ վիշապից ու քաղից ձևավորված մի հրեշ, ինչպիսին եղջերվաքաղն է:

Ըստ մեր առաջին պատմիչների՝ Վաղարշակի ժամանակ Հնդկաստանից եկած գաղթականները Տարոնի հիշյալ Վիշապ քաղաքը այդպես են կոչել իրենց հայրենի Վիշապ հաստվածի անունով (մանավանդ եթե առնչություն ունի Վիշնուի հետ), որին հայերը կոչեցին Օձ: Ներկայումս թեև այդ քաղաքի տեղը հանտնի է, բայց ամբողջովին ավերված է և ջրասույզ:

Տիգրանի՝ երկնքում սավառնող Վիշապը հիշեցնում է փոթորիկից ձևացած ձկան միջոցով վիշապ հանելը (տե՛ս ստորը), որի մոլորական հավատքը 16 դար հետո՝ քրիստոնեության հառաջացած ժամանակ իսկ (գուցե մինչ այժմ), կար մեր հասարակ ժողովրդի մեջ: Սրանց էր խրատում Հովհաննես Սարկավագ վարդապետը 12-րդ դարի սկզբում՝ գրելով . «Առասպելական ստութեանն ունկն դնել, և հաւատալ մի՛ երբեք յանձն առնուցուս վիշապ զնա անուանողաց»:

Սովորություն էր նաև զենքները վիշապների արյան մեջ թաթախելը, որպեսզի վերքերը անբուժելի դառնան՝ դա էլ սովորելով վերոհիշյալ Հերակլեսի՝ բազմագլուխ Հիդրայի արյամբ արածից: Ասում էին, թե այդպիսին էր նաև մեր Արշակ Ա-ի նիզակը, որ նա զարկեց-մտցրեց քարարձանի մեջ և պաշտելի դարձրեց պոնտացիների համար: «Դաշանց թուղթ»-ը հնարող հեղինակն էլ Կոստանդիանոսի ձեռքով Տրդատին ընծայում է վիշապամուխ նիզակներ:

Սնահավատ երդվեցնող գրվածքների մեջ կա այսպիսի մի բան . «Ընդդէմ 666 ազգ Օձից, գազանաց, սողնոց, զեռնոց՝ որ զեռան ի վերայ երկրի, որք հարկանեն և տկարացուցանեն զմարդիկ»: Եվ շատ օձեր՝ ստույգ և անստույգ, հիշատակվում են նաև անունով . «Իժն Սալամարդեայ (Սալամանդր), որ զմահաբեր դեղն ի յաջոյ ծնօտն ունի» . ատզե (՞) օձ, որ ունի 12 գլուխ և 4 լկամ կամ 4 կլամ այսինքն՝ ունի 4 կզակ կամ ցռուկ, ագռացատես, երկնահայաց օձեր . օձ «Լապստակավազ, որ զակունք ակն ի գլուխն ունի» . արեգակնահայաց օձ . թոչուն օձ . խորխող օձ . օձ «բբճող, որ ի հարիւր տարին ակն մարդոյ չտեսնէ զնա, վիշապանայ, և է 12 գլխէն և կլամեն . — Օձն Մեծահառանչ, որ տասն տարի ոչ երեւի մարդոյ, վիշապանայ», և այլն . «Օձն Ամպտես և Ձիրնագոյն — Իժն տրտմագին . — Օձն Եղջիւրաւոր . — Օձն Կայծակնատես . — Օձն Ամայել . — Օձն Մարմնատես . — Օձն Մորմէնահայեաց . — Օձն Կանաչ . Օձն Դեղին . — Օձն Արուեստաւոր Բաշաւոր . Տնաւոր» և այլն, և այլն:

Օձերին երդվեցնողը սրանց հետ հիշատակեց նաև սողուններին ու զեռուններին, որոնց տեսակները հետո է անվանում՝ պիծակ, մեղու, կարիճ և կոր: Թեև վերջինս նույն կարիճն է, բայց այսպիսի գրվածքներում հաճախ է այդ անունով հիշվում: Գուցե և տարբերվում է մեծությամբ կամ մեկ այլ հատկությամբ: Սրա մասին ասում է. «Կորն՝ որ ելանէ ի թիւնից սատանայի, և ինքն թագաւոր է ամենայն պիղծ զեռնոց որ զեռան ի վերայ երկրի և հարկանեն զմարդիկ», և դրա հետևից շարում է կուրն, մուրն, փողախն, «Խնին, Արիկն որ զմահադեղն բարձեալ ունի ի քիմս իւր. . . Մանրողն՝ որ զմահադեղն բարձալ ունի յաջոյ կզակն իւր, խիթնասողն և այլն:

Սրանց և այսպիսինների բույնն էլ, թույնն էլ թողնենք հավատացողին. մեզ առավել փափագելի էր իմանալ դրանց՝ ինչպիսի միջատ կամ սողուն լինելը: Գոնե բնության պատմության այս մասը մի բան կշահեր:

Ավելի վերադաս կենդանիներին դառնալով գտնում ենք հատուկ կարծիք ու հավատք ընծայված մեր տների ծանոթագույնին՝ Շնորհալի հայրապետի հիշածին՝ տիկնանց պես հուշիկ քայլող և նրանց ոսկի բարձերին բազմող կատվին: Շնորհալուց դարերով հին Հովհան Իմաստասեր հայրապետը իր պավլիկյանների ժամանակների շատ այլանդակ աղանդների հետ հիշատակում է նաև «զկատվապաշտութիւն. . . կերապուր իւրեանց զկերակրոցն ապականիչս՝ առնելոյ աղագաւ», այսինքն՝ մկներին ոչնչացնելու համար «մկնորսակացն լինելով պաշտօնամատոյց»:

Բայցարի ու տես, որ այս որսացվող, զզվելի ու ամենամուտ կենդանին էլ, թեև հայերիս մեջ պաշտամունք չի առել, ինչպես Եգիպտոսում ու Քանանում (ըստ Ս. գրքի պատմության), որոշակի առումով հեռու չէր սնոտի հավատքից՝ պես-պես խտրությամբ մկնանկի՝ ամանի մեջ ընկնելու, և մկնարածի, այսինքն՝ մկան կրծած ու մասամբ կերած մաքուր նյութերի, որոնց ավելորդ խխտրությունը այսօր էլ նշամբելի է հասարակ ժողովրդի մեծ մասի մեջ, ինչի մասին Ղազար Ձահկեցի կաթողիկոսը գրում է. «Անմտագոյնք կանայք ոմանք՝ ի տարին մի օր կիրակի պահեն, և մարմնական գործ բնաւին ոչ կատարեն, ասելով. Այսօր Մկնտօն է. եթէ մարմնական գործս ինչ առնեմք՝ գան Մկունք և կտրատեն զհանդերձս մեր»: Աղթարքների մեջ էլ ոչ սակավ խտրական բաներ կան գրված

մկների կերածի ու արածի մասին:

Մուկից և մկնորսից հետո կամ նրանց հետ միտքը հիշում է վերջինիս ահաբեկողին ու թշնամուն և մարդու բարեկամին՝ շանը: Սա այլևայլ կերպարանքներով ու անուններով պատվի է արժանացել ու պաշտվել է շատ ազգերի, մանավանդ հույների և եգիպտացիների կողմից երկրի րա, երկնքում ու դժոխքում: Վերջինիս մեջ այն պաշտվել է եռագլուխ Կերբերի անվամբ, իսկ երկնքի հաստատության մեջ պայծառ աստղերով, ինչը տեսանք նաև մեր Հայկի պար կոչվածի մեջ:

Իմաստասերը (Հովհան) կատվապաշտների մասին ասում է, թե այդ մոլորությամբ «յայնոցիկ մղեալ խորխորատ՝ որք զՁի և զՇուն ընտրեցին իւրեանց լինել աստուած», բայց չի նշում, թե հայերն էլ են ընտրել, պաշտել կամ պատիվ մատուցել, մանավանդ, ինչպես հիշեցինք, ըստ ազգային ավանդության, Հայկը, իր թշնամիկներին անարգելով, նրանց շուն կոչեց:

Իսկ ձիու առումով, որ հայերեն կոչվում է նաև երիվար, մեր երկրի համար բավական պատիվ էր ունենալ լավ ու ընտիր մի ցեղ, ինչը երբեմն մեր երկրին տիրող աշխարհակալները ընդունել են որպես հարկ, և առավել մեծ պատիվ էին ձիերին խնամող բնիկ ու ճարպիկ հեծյալներն ու հեծելազորը: Պատմիչների և վիպասանների հիշատակած ձիերի գույները (սպիտակ, աշխետ, ճարտուկ ճանճկեն, գեղեցիկ սև) քիչ ավելի են բարձրացնում այդ հիրավի չքնաղ կենդանու պատիվը: Իսկ ձիերի զոհաբերությունը չաստվածներին կամ նրանց տիրոջն ու հեծյալին՝ վերջիններիս թաղման ժամանակ, է՛լ ավելի է բարձրացնում նրանց պատիվը կրոնական առումով: Գուցե ավելի ևս այն բարձրացնում են ձիակերպ գերեզմանաքարերը, որ մինչ հիմա գտնվում են նաև քրիստոնյաների վրա:

Այսպիսի գերեզմանաքարերի հետ հարկ է հիշել ավելի հաճախակի հանդիպող խոյակերպը, այսինքն ոչխարի ձև ունեցողը, որ Հայաստանի շատ կողմերում է երևում, մանավանդ 16-րդ, 17-րդ դարերում հաստատվածները՝ հայտնապես հետևելով հնագույններին, որոնց տապանագրերը ընթերցված չեն կամ մեզ ծանոթ չեն: Այս ամենապատվական կենդանին, որին խնամելը մարդու առաջին արհեստն էր (խաշնադարմանություն) և արևելքի ու արևմուտքի շատ ազգերի մեջ դեռ առաջինն է, մեր կերկրում էլ ընտիր ու բազմաքանակ տեսակներ ունի և

ինչպես հայտնի է, եկամուտի գլխավոր միջոցներից մեկն է և Քրիստոսից շատ դարեր առաջ էլ է վկայել . այն ժամանակներից մինչև այժմյան քրդերի՝ օտար հովիվների համար այնտեղ արոտատեղիներ են եղել:

Նույնաձև գերազմանաքարերից զատ՝ խոյը այլ առումով էլ է նշանավոր ազգային մտքի ու հիշատակումների մեջ՝ ձևով ու հատկություններով, որ հայտնի են դարձնում խոյանալ բառը՝ «արագ վազել-հասնել» իմաստով, բայց առավել ևս՝ ճարտարապետության մեջ գործածված խոյակ և խոյակապ (որ հոյակապ-ն է) բառերը, որ վերաբերում են ամբողջ շինվածքին և առանձին մասերի, ինչպես յուների վերնախարսխի մասին, որը հոնիական ոճի սեփական կնիքն է: Բայց թվում է, թե ոչ միայն սյան գլխին, այլև կամարի մեջ խոյի գլուխ դնելը ծանոթ էր հայերին, քանզի մեր հին բառգիրքը մեր հոյակապը թարգմանել է կամարակապ, որ այժմ ասվում է որևէ մեծագործ շինության համար: Եվ ոչ միայն շենքի, այլև որևէ մեծագործության, մեծագործող ու շինարար մարդու էլ տալիս են Հոյանուն կոչումը: Սրանք հիշեցինք խոյի կամ ոչխարի պաշտամունքի հավանականության պատճառով՝ թողնելով և նույնանուն բնակության վայրերը:

Այս կենդանու մերձավորներն էլ՝ այծ, նոխազ, քաղ, քոշ, իրենց անունները լսելի են դարձնում շեն ու անշեն տեղերում՝ որպես զոհ գործածվելով, եթե ավելի կրոնական նշան չունեն, որպիսին ունեն դրանցից զուգված կամ խառնված մտացածին կենդանիները՝ վիշապաքաղը, եղջերվաքաղը և այլն: Վերջին անունը առաջ է բերում սոսկ կամ անխառն եղջերու, որի վարգելուն Արտաշեսի բաղձալը հիշել ենք (էջ 41): Առավել հավանական է թվում հայերիս մեջ սրա նվիրական լինելը, մանավանդ ինչպես հույների մեջ էր եղել, այնպես էլ մենք ենք դրանց նվիրաբերել մեր Անահիտին: Այժմյան Բայազետ բերդում, որ գտնվում է հին ժամանակներում հայոց ամենաշատ պաշտամունքի տեղերի կենտրոնում, առ այօր մնացել է այդպիսի պատկերով մի քարե քանդակ: Տեսնողը կարող է դատել, որ որքան էլ այլաձև ու առասպելյայ է այդ բագինի վրա կանգնած կենդանին (թերևս բաղադրված առյուծից ու գայլից), դեռ հայտնի է դարձնում եղջերուի էությունը: Եվ եթե քանդակը ավելի անմաշ մնացած լիներ, այդ էությունը էլ ավելի հայտնի կդարձներ: Այդ պատկերաքանդակն էր պատվի արժանացած ու պաշտված, թե իր կերպարանած չաստվածը՝ միապես հեթանոսական կրոնի մի ապացույց է:

Մեր հին պատմիչ Զենոբի գրվածքի մի օրինակում ասվում է, թե Վաղարշակը Հնդկաստանից գաղթած Դեմետրին ու Գիսանեին բնակության տեղերը տվեց Տարոնում ու Ապահունիքում՝ «հանդերձ դիւաբնակ աշտեօքն և երկարածնօտ Աւարոսիւ . . . կուռս ըստ պատկերին այնմիկ, զոր ի Հնդիկս Վիշապ կոչէին», որից էլ քաղաքը կոչվեց Վիշապ: Չգիտեմ ինչ է այդ երկարածնոտ Ավարոսը՝ վիշա՞պ, թե՞ այս քանդակի վրա երևացող երկայնացռուկ մի անասուն: Հետագայի ուսումնասիրողներին ենք թողնում ստուգել այդ և նախ՝ այդ երկբայելի անունը (Ավարոս), որ գուցե հնդկերեն նշանակում է այս կամ այն կենդանին:

Թողնում ենք նաև գազաններին՝ իրենց առյուծ թագավորով և ինով, որոնց անվամբ Հայաստանում կամ այլևայլ տեղեր: Ունենք նաև ինչպես մարդկանց, այնպես էլ ընտանի կենդանիների հատուկ անուններ (Առյուծ, Ընձակ, Կորյուն, Եզնիկ, Ցլիկ, Արջուկ և այլն), որոնք առնված են թվում ավելի շատ այդ կենդանիների պատվելի լինելուց, քան բարքից, քանզի նախատական պիտի լիներ մարդկանց այդպես անվանելը, եթե այդ չորքոտանիները համարվեին շատ անարգ և ոչ առասպելներով ու կարծիքներով ազնվացված: Հիշենք միայն մեկը, որը մի տեսակով ընտանիների կարգում է, մյուս տեսակով՝ վայրիների: Դա վայրի խոզն է, որին մենք կոչում ենք վարազ, պարսիկները՝ վյուրրազ: Մարդկանց բազում հատուկ անունները և երևթույթներ ու աստղերի հատկանշող անունները բավարար հավաստիք են, որ այս կատաղի ու անճոռնի գազանն էլ է ունեցել կորանական շոշորդ: Թերևս այս համարումով չամաչեցին մեր երկու կրոնների միջնակետում ապրող նախնիները իրենց մեծ ու երևելի, ապա և սուրբ թագավորին էլ մի քանի օրով վարազի կերպարանք ընծայել, փոխանակ ավելի բացատրեին նրա բարոյական այլափոխությունը: Սակայն տեղանքի (Վարազ լեռ, Վարազաբլուր) և մարդկանց (Վարազդատ, Վարազարդատ, Վարազշապուհ, Վարազվաղան, Վարազտիրոց) հատուկ անուններից առավել նշանակալի են «մեծ, ընդարձակ, զորավոր» իմաստով երևույթները, ինչպես՝ վարազաթև, վարազաջիղք, վարազափողոց և էլ առավել նշանավոր վարազագիր կամ վարազանկարագիր մատանի: Վերջինիս ձևը կնքված գրի հաստատության ապահով նշան էր: Արդյոք կնիքի տառերն էին հատուկ ձևի, թե մատաուն վրա վարազի կերպարանք կամ գլուխ էր քանդակված՝ որոշակիորեն ասել չեմ կարող: Բայց վերջինն ավելի հավանական է: Գուցե դրանցից առավել

նշանակալի էր մատանու ու կնիքի մեծությունը, ինչպես այժմ էլ թագավորներն ու տերությունները ունեն մեծ ու փոքր կնիքներ և մեծով կնքում են մեծ խնդիրները կամ մեծերի հետ թղթակցությունը:

Հելլենական դիցաբանության մեջ կամ վարազի բազում հիշատակումներ այլևայլ դիքերի ու դյուցազունների հետ: Անհրաժեշտ է թվում, որ հայերս էլ ունենայինք դիցական մի վարազ, երբ հիշում ենք, որ ինչպես տրդատը Տիրի տուրքն է, Միհրդատը Միհր չաստվածի, այդպես էլ Վարազդատը պետք է լինի Վարազի տուրքը (այդպես է նաև մեր սուրբ կրոնում . Աստվածատուր, Քրիստոսատուր, Խաչատուր): Գուցե Տիրն ու Վարազը շատ էլ հեռու չեն իրարից, քանզի ըստ պարսիկների՝ Հրատ մոլորակի (ըստ դիցաբանների՝ Արես) նշանը վարազն էր, իսկ տիրը, ինչպես կտեսնենք, դպրության չաստվածն էր՝ ոչ անմասն արիությունից:

Եթե ջրային և ցամաքային կենդանիներից հետո ցանկանանք օդի մեջ շրջողների հետ էլ թափառել, կարոտ կլինենք շատ մանր ու ոչ շատ հաստատուն քննության: Հայոց համազգային ու արքունի զորագնդերում ու պաշտոնատարների մեջ կային այլևայլ թռչունների պատկերներով դրոշակիրներ (աղավնի, բազե, արծիվ և այլն): Եվ ամբողջ ազգատոհմ ունենք՝ Հավունիք կամ Հավնունիք անունով: Բայց դրանք սոսկ նշա՞մ էին, թե՞ կրոնական գաղափորի արտահայտություն՝ չեմ կարող վճռել: Միայն հավանական է Արծրունիների՝ արծվին պատվի արժանացնելը, եթե, արդարև, ըստ ավանդության, ասորեստանցիների սերունդ են կամ խառնուրդ (գոնե նրանց նահապետները), ինչը երաշխավորում է նաև Ս . գիրքը՝ հիշելով Սենեքերիմ թագավորին սպանող որդիների՝ Հայաստան փախչելը: Սրանց ազգի չաստվածներից մեկը կոչվում էր Նեսրաք կամ Նեսրոք, որի դիմաց երկրպագելու պահին իր 185000-անոց զորաբանակը կորցնող թագավորը կորցրեց նաև իր կյանքը: Հայրասպանները իերնց կողոպտած ինչքի հետ եթե ոչ նույն, ապա ուրիշ արծիվ-դիքի պատկեր էլ բերեցին Հայաստան, որտեղ այն պաշտվեց նրանց ժառանգած կողմերում: Այս է հավանորեն Արծրունյաց ցեղի անվան պատճառը, որ իրենց Թովմա պատմիչը հետաքննել է Խորենացուց հետո 10-րդ դարում:

Հեթանոսական քանդակ (Բայազետ)

Մեկ այլ առումով էլ անհարմար չէ, որ եթե չորքոտանիների թագավոր անվանված առյուծը ցամաքի վրա էր պատվի արժանացել, ապա օդում էլ թռչունների թագավոր արծիվը պատվի արժանացած լիներ: Մանավանդ, ինչպես հույների Զևսին, այնպես էլ հայոց Արամազդին էր նվիրված ու նրա ձեռքին էր հանգչում հայկական ոչ աննշան արծիվը, որի այլևայլ տեսակները հիշվում են մեր լեզվում՝ գետարծիվ, ցրտարծիվ, քաջարծիվ: Կան նաև նրանցից մեծ տեսակները՝ պաշկուճ, լաշհավ, քարքազ Անգեղ տան մեծ ցեղի ու նախարարի անունից գուշակելի է, որ անգղն էլ իր պատիվն ու կրոնական հիշատակումն է ունեցել:

Այս ծանոթ ու երևելի կենդանիներից հետո արժե՞ արդյոք մի փոքրիկ միջատ էլ հիշել, որ մեծամեծ անուններ ունի (ոսկի եզնակ, աստծու եզնակ) և առասպելական մի նշանակություն է ընծայում: Գալենոսի բժշկական բառարանում այն կոչվում է թունավոր ճիճու: Թունավոր լինելն է հայտնում նաև Մխիթար Գոշի 60-րդ առակը:

Հայոց երկրի թռչնաբանությունը թե՛ թռչուններով և թե՛ անուններով կարելի է հարուստ համարել, և կրոնական ու պատմական նշանակությամբ հետաքննելի են արտավազդահավը, ապոնեկը, բարեծուծը, բրդոռը, գուրգուրը, իշտրմուղը, լծելծեն, կատիճակողը, կովկորուսիկը, կովացուլը, հովհաննահավը, սանդրաբոբոկը և այլն, որոնց մեր այս գործի նպատակով ճանաչելու համար մեզ էլ էին պետք զորավոր թևեր: